

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2016 թ. նոյեմբերի 7-ին կայացած թիվ 3 նիստի

Օրակարգում՝

կենսաբանության ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը:

Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի 40 անդամներից նիստին ներկա էին 37-ը:

Նիստի նախագահ ընտրվեց Կենսաբանության գ/հ ինստիտուտի տնօրեն Ա.Հ.Եսայանը

ԼՍԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Է.Ս. Գևորգյանի հաշվետվությունը

Հարգելի գործընկերներ.

1. Ընդհանուր տեղեկություններ ֆակուլտետի վերաբերյալ

Նախ ուսանողների թվաքանակի մասին: 2015/16թթ ուստարում ֆակուլտետում սովորում է 522 ուսանող: Սա վատ ցուցանիշ չէ, եթե հաշվի առնենք օբյեկտիվ դժվարությունները, որոնք առկա են հանրապետությունում դեմոգրաֆիկ իրադրության և բնագիտական մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրության նվազման առումով: Իհարկե, պետք է նշեմ, որ այս տարի նույնպես ինչպես անցյալ տարում բոլոր երեք մասնագիտությունների գծով վճարովի համակարգում մրցույթն անցկացվել է միայն մեկ քննության՝ կենսաբանության արդյունքներով, և սա չի կարող իր բացասական ազդեցությունը չունենալ ուսանողների հետագա ուսումնառության պրոցեսում: Ներկայումս բակալավրիատում սովորում են 386 առկա համակարգի և 76 հեռակա համակարգի ուսանողներ, իսկ մագիստրատուրայում՝ 60 ուսանող: Անցյալ տարիների համեմատ մագիստրատուրայի ուսանողության փոքր թիվն արդյունք է հինգ տարի առաջ դպրոցների շրջանավարտների թերի քանակի, որի արդյունքում այս ուստարում մագիստրատուրայի երկրորդ կուրսում սովորում է միայն 15 ուսանող: Գործող եռաստիճան կրթական համակարգն իր մեջ ներառում է նաև ասպիրանտուրան: Ներկայումս ֆակուլտետի այսօր արդեն 7 ամբիոններում ուսանում է 16 ասպիրանտ, այդ թվում՝ առկա համակարգում՝ 1, իսկ հեռակա համակարգում՝ 15 ասպիրանտ: Այսպիսով, ներկա ուսումնական տարում սովորողների ընդհանուր թիվը (ուսանողներ և ասպիրանտներ) ֆակուլտետում կազմում է 538:

Նշեցի 7 ամբիոն, քանի որ համալսարանի բնագիտական ֆակուլտետների ամբիոնների թվաքանակի կրճատման գործընթացները մեզ էլ հասան: Ֆակուլտետի Գիտական խորհուրդն իր փետրվարյան նիստում որոշում ընդունեց կենսաքիմիայի ամբիոնի և մանրէաբանության, մանրէների ու բույսերի կենսատեխնոլոգիայի ամբիոնի միավորման մասին, որի հիմնական պատճառն, իհարկե, ֆակուլտետում ուսանողների թվաքանակի նվազումն է: Վերջին տարիներին կենսաբանության մասնագիտության գծով ընդունելության արդյունքները գոհացուցիչ չէին, մինչդեռ կենսաքիմիայի բաժնում այս առումով վիճակը հաստատուն բարվոք էր: Հետևաբար կենսաբանության բաժնի ամբիոններից մեկի՝ մանրէաբանության և մանրէների ու բույսերի կենսատեխնոլոգիայի ամբիոնի տեղափոխումը կենսաքիմիայի բաժնի և միացումը կենսաքիմիայի ամբիոնի հետ, համոզված ենք, որ դրական ազդեցություն կունենա երկու ամբիոնի համար էլ: Մասնագիտական առումով էլ սա շատ տրամաբանական է, քանի որ ներկայումս մանրէների ուսումնասիրություններում գերակշռում են կենսաքիմիական մեթոդական մոտեցումները, իսկ կենսատեխնոլոգիան և կենսաքիմիան միմյանց հարազատ բնագավառներ են: Սրանք օբյեկտիվ դրդապատճառներն են, սակայն կան նաև սուբյեկտիվ պատճառներ: Ամբիոններից մեկն իր գիտակրթական գործունեությամբ լավագույններից էր, եթե ոչ լավագույնը ֆակուլտետում, իսկ մյուսը, ցավոք, մեղմ ասած, իր լավագույն վիճակից շատ հեռու էր, չունեք ամբիոնի վարիչ և ունեք շատ պրոբլեմներ ... Մի խոսքով, հուսով ենք, ավելի ճիշտ՝ համոզված եմ, որ միացումն էապես կնպաստի, ընդհանուր առմամբ, գիտակրթական գործունեության բարելավմանը ֆակուլտետում: Համալսարանի Գիտական խորհուրդն ընդառաջեց մեզ՝ հաստատելով նաև միավորված ամբիոնի անվանումը՝ «Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի» ամբիոն:

2. Ուսումնական աշխատանքներ

Ֆակուլտետի ուսումնական գործընթացները հաշվետու տարում ևս ընթացել են բնականոն հունով՝ շնորհիվ առկա փորձառու պրոֆեսորադասախոսական անձնակազմի և երիտասարդ, գործին նվիրված դասախոսների: Շարունակվել է ֆակուլտետի դասախոսական անձնակազմի երիտասարդացման գործընթացը: Ֆակուլտետի 4 ամբիոնների 7 վետերան դասախոսներից 5-ի դրույքաչափը գրոյացվել է, երկուսինը՝ նվազել, յուրաքանչյուրը՝ քառորդ դրույքով (ընդհանուր առմամբ ազատվել է 3,0 հաստիք): Ազատված հաստիքներում ընդգրկվել են երիտասարդ և համեմատաբար երիտասարդ մասնագետներ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի, կենդանաբանության, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոններում:

Կարծում եմ, որ ֆակուլտետի ուսանողների ընդհանուր թվաքանակը կարելի է բավարար համարել, երեք միլիոնից էլ քիչ բնակչություն ունեցող երկրի համար

տարեկան ավելի քան 100 կենսաբան-մասնագետ պատրաստելը բավարար է, կարևորը շրջանավարտերի որակական չափանիշներն են: Ցավոք, այս տարի ևս գոհ չենք ուսանողների մի ստվար հատվածի գիտելիքներից: Արդեն սովորական է դարձել, որ ցանկացած կուրսում գիտելիք ստանալու ցանկություն (մոզր 13-ից բարձր) դրսևորվում է բակալավրիատի ուսանողների միայն կեսի մոտ, մնացածներն իրենց բավարար գնահատականները ձեռք են բերում դասախոսական անձնակազմի, շատ դեպքերում, չափից ավելի հանդուրժողականության շնորհիվ: Եվ նույնիսկ նման իրադրությունում անցյալ ուսումնական տարվա ընթացքում ֆակուլտետից հեռացվել է 17 ուսանող, իհարկե, տարբեր պատճառներով, իսկ այլ բուհերից և ֆակուլտետներից մեզ մոտ է տեղափոխվել միայն 3 ուսանող:

Գերազանց առաջադիմություն (մոզր 18-ից բարձր) հաշվետու տարում ունեցել են բակալավրիատի ուսանողների միայն 7%-ը (անցյալ տարում՝ 11% էր): Մագիստրատուրայում, իհարկե, պատկերն ավելի բարվոք է (մոտ 15% գերազանցիկներ, անցյալ տարվա մոտ 30%-ի դիմաց): Կրթության պատշաճ որակի ապահովումը մեր առջև ծառայած կարևորագույն խնդիրն է: Մենք ունենք փայլուն ուսանողներ թե բակալավրիատի կուրսերում, և թե մագիստրատուրայում: Սակայն ցավոք տեսնում ենք, որ ուսանողների կրթական միջին մակարդակը տարեցտարի անկում է ապրում: Կրթության որակի վրա ազդող շատ գործոններ կան: Որակի ապահովումը կախված է ինչպես գիտելիք առաջարկողների՝ դասախոսական կազմի գործունեությունից, այնպես էլ գիտելիքն ընկալելու ուսանողների ունակությունից և ցանկությունից: Պակաս կարևոր չեն նաև ֆակուլտետի ուսումնաստեխնիկական բազայի հնարավորությունները: Ինչպես նշել էինք նաև անցյալ տարվա հաշվետվության մեջ, այս երեք, հիմնական գործոններից երկուսը (դասախոսական որակյալ անձնակազմ և անընդհատ բարելավվող ուսումնաստեխնիկական բազա), կարծում եմ, ի գորու են ապահովելու որակյալ կրթական մակարդակ: Սակայն դրան խոչընդոտում է ուսանողների մի ստվար հատվածի մոտ գիտելիք ստանալու և լավ մասնագետ դառնալու ոչ այնքան ունակության, որքան որ ցանկության իսպառ բացակայությունը: Ուսանողների կրթական միջին մակարդակի տարեցտարի դիտվող նվազման պատճառները շատ ավելի խորն են՝ կապված հանրակրթական դպրոցների համակարգի գործունեության հետ, հասարակության շրջանում գիտելիքի ոչ պատշաճ գնահատման հետ: Ինչնիցե, կարծում եմ, որ նշվածը չի ազատում մեզ կրթական համակարգում նորանոր մոտեցումներ կիրառելու, մասնագիտական հետաքրքրություններին նպաստող գիտական ժամանակակից գիտելիքներ ուսանողներին հրամցնելու առաքելությունից: Շատ կարևորում եմ նաև Երևանի և մարզերի ավագ դպրոցներում մեր մասնագետների պարբերաբար այցելությունները, նրանց կողմից մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ զեկույցների, դասախոսությունների անցկացումը, ինչը հաշվետու տարում էլ ավելի է ընդլայնվել: Սա մեզ հնարավորություն է տալիս ավագ դպրոցների աշակերտությանն ավելի մանրակրկիտ տեղեկացնելու ֆակուլտետի մասնագիտությունների, ֆակուլտետի գիտակրթական գործունեության մասին և, ինչու չէ, նաև գովազդելու այն: Հաշվետու

տարում մեր գրեթե բոլոր ամբիոնների ներկայացուցիչները մասնակցել են նման աշխատանքներին. կամ՝ գործուղվելով Հայաստանի մարզային դպրոցներ, կամ՝ հանդիպումներ ունենալով Երևանի որոշ ավագ դպրոցներում: Պարբերաբար են դարձել նաև տարբեր դպրոցների աշակերտների այցելությունները՝ ֆակուլտետի նախկին շրջանավարտ-ուսուցիչների ղեկավարությամբ:

Եթե անցյալ տարվա ընթացքում ուսումնագիտական գործընթացների կատարելագործման առումով արժանահիշատակ երևույթ էր ֆակուլտետի «Էկոլոգիայի և բնության պահպանության» ամբիոնի աշխատակիցների ջանքերով «Կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոնի» բացումը, ապա հաշվետու տարում իրականացվեց երկրորդ նմանատիպ կառույցի՝ «Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնի» համար ֆակուլտետի մասնաշենքում տարածքի հատկացումը, դրա վերանորոգումն ու համապատասխանեցումը կենտրոնին պահանջվող պայմաններին: Այս կենտրոնը մեր մեկ այլ ամբիոնի՝ «Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի» ամբիոնի աշխատակիցների ներկայացրած համապատասխան ծրագրի (ղեկավար՝ կենս.գիտ.թեկնածու Կարեն Թռչունյան) Համաշխարհային բանկի կողմից հայտարարված մրցույթում հաղթանակի արդյունքն էր (ընդհանուր գումարը՝ 650.000 ԱՄՆ դոլար): Այս գիտակրթական կենտրոնը, «Կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոնի» նման, նույնպես ունենալու է համապատասխան հետազոտությունների համար բարձր արդյունավետության սարքավորումներ, ինչը հնարավորություն կտա ապահովելու պատշաճ մակարդակի կրթություն առկա մագիստրոսական ծրագրերի գծով, իրականացնելու գիտակրթական համագործակցություն ինչպես Հայաստանի, այնպես էլ արտասահմանյան գիտական կենտրոնների, համալսարանների հետ: Ծրագրի հիմնական նպատակն է բարելավել մանրէաբանական և կենսատեխնոլոգիական կրթությունը համալսարանում, համապատասխանացնել այն աշխատաշուկայի պահանջներին և եվրոպական ու միջազգային չափանիշներին: Կենտրոնում նախատեսվում է նաև ստեղծել տարբեր ուղղվածության «start up» նախագծեր, որոնք կհամախմբեն իրենց մեջ տարբեր ոլորտների ներկայացուցիչներ՝ համահունչ մեր բուհի զարգացման 2016-2020թթ ռազմավարական ծրագրին: Նախատեսվում է մինչև 2017 թվականի փետրվար-մարտ ամիսներ ստանալ բոլոր անհրաժեշտ սարքավորումները, տեղադրել դրանք, վերապատրաստել անձնակազմին դրանց շահագործման համար: Կենտրոնն ամբողջապես նախատեսվում է շահագործել 2017 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

Այսպիսով, հաջորդ տարվանից մեր ֆակուլտետում գործելու են արդեն բարձրակարգ սարքավորումներով հագեցած երկու գիտակրթական կենտրոններ: Նմանատիպ կառույցների դերը հատկապես մագիստրոսական կրթության բարելավման առումով դժվար է գերազնահատել: Տարեցտարի հաշվետվություններում նշվում է, որ մագիստրատուրան մեզանում դեռևս լիարժեք կայացված չէ: Շատ ենք նշել առկա թերացումների մասին, սակայն, ցավոք, դրանք

այսօր էլ մեզ հետ են: Կարծում եմ, անհրաժեշտություն չկա դրանց նորից անդրադառնալու, կրկնելու բազմիցս նշվածը. բոլորս էլ դրանք քաջ գիտենք: Գտնում եմ, որ դրանց մի մասի հաղթահարման գործում կարևոր դեր կարող են ունենալ միջամբիոնային, միջֆակուլտետային նոր հնչեղություն ունեցող մասնագիտացումների բացումը, գիտակրթական լաբորատորիաների ժամանակակից սարքերով հագեցումը, ինչը կարող է ոգևորել մագիստրանտների ղեկավարներին, բարձրացնել նրանց պահանջկոտությունը՝ ոգևորելով նաև մագիստրանտներին: Այս տեսակետից կարևորում եմ ներկայումս համալսարանում ընթացող մագիստրոսական ծրագրերի վերանայման՝ լրամշակման գործընթացը, համաձայն որի ֆակուլտետը ներկայացնում է մագիստրոսական 9 ծրագիր, որոնցից 6-ի անվանումները փոխված են (դրանք են՝ «Բժշկական սնկաբանություն և կիրառական բուսաբանություն», «Կենդանաբանություն և մակաբուժաբանություն», «Ընդհանուր և մոլեկուլային գենետիկա», «Հիմնարար և կիրառական ֆիզիոլոգիա», «Մանրէաբանություն և կենսատեխնոլոգիա», «Էկոլոգիա և կենսառեսուրսների կառավարում» մասնագիտացումները): Բոլոր 9 ծրագրերի ամբողջական փաստաթղթային փաթեթները, որոնք ներառելու են ուսումնական պլանները, մասնագրերի և բաղկացուցիչ ուսումնական մոդուլների համառոտագրերի ըստ սահմանված ձևաչափերի պատրաստումը պետք է ներկայացվեն մինչև դեկտեմբերի 31-ը, իսկ ծրագրերի հաստատումը ԵՊՀ Գիտական խորհրդի կողմից նախատեսվում է մինչև 2017 թ. մարտի 31-ը՝ ԵՊՀ Որակի ապահովման կենտրոնի և ուսումնամեթոդական կենտրոնի կողմից ստուգումներից հետո, Գիտական խորհրդի Որակի ապահովման մշտական հանձնաժողովի վերջնական (դրական կամ բացասական) եզրակացությունից հետո:

Միջֆակուլտետային համագործակցության տիպիկ օրինակ կարող է ծառայել Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետում բացվող «Սննդի անվտանգություն» մասնագիտացումը, որտեղ, կարծում եմ, մեր մասնագետների մասնակցությունը պետք է նախատեսվածից ավելի ծանրակշիռ լինի և կազմի մասնագիտական դասընթացների առնվազն 40%-ը: Ցավոք, մեր քիմիկոս-գործընկերներն այդպես չեն գտնում: Կարծում եմ, ապագան կստիպի վերանայել մոտեցումներն այս հարցում: Միջֆակուլտետային համագործակցության երկուստեք օգտավետ օրինակ էր հաշվետու տարում «Դեղագիտություն» («Ֆարմացիա») մասնագիտությամբ մասնագիտացող 12 մագիստրանտների մագիստրոսական թեզերի, բակալավրիատի չորրորդ կուրսի 29 և երրորդ կուրսի 16 ուսանողների ավարտական աշխատանքների կատարումը մեր ֆակուլտետի ամբիոններում: Կատարված աշխատանքներն, ընդհանուր առմամբ, արժանացան դրական գնահատականի մեր քիմիկոս-գործընկերների կողմից, և ուրախալի է, որ շարունակվում են նաև այս ուսումնական տարում:

Նման օրինակները հաստատում են այն, որ, իրոք, կենսաբանության դերը 21-րդ դարում բնագիտության զարգացման գործընթացներում դժվար է գերազնահատել: Անցյալ տարվա հաշվետվության մեջ նշել էի, որ ժամանակն է ներառել որոշ բնագիտական ֆակուլտետների բակալավրիատի ուսումնական պլաններում

Ժամանակակից կենսաբանական ոլորտի գոնե մեկ դասընթաց: Դա էապես կնպաստեր միջֆակուլտետային մագիստրոսական ծրագրերի առաջարկմանը, միջֆակուլտետային գիտական համագործակցությանը, ինչը համահունչ է ԵՊՀ զարգացման առաջիկա հնգամյա ռազմավարական ծրագրին: Ցավոք, կան մեր այս առաջարկին, միջֆակուլտետային մագիստրոսական ծրագրերի առաջարկմանը չնպաստող գործոններ: Դրանց թվում ոչ միայն մեր այլ ֆակուլտետների բնագետ-գործընկերների, թող ինձ ներվի, կոնսերվատիվ մտածելակերպն է (որոնք չեն պատկերացնում կենսաբանության բնագավառի որևէ դասընթաց ֆիզիկայի կամ կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետում), այլև ուսանողության թվաքանակի անշեղորեն նվազման միտումը, ինչը ստիպում է նախ և առաջ ապահովել տիտուլային մասնագիտության մասնագիտացումների իրականացումը: Այլապես, տրամաբանական կլիներ միջֆակուլտետային մագիստրոսական ծրագրեր ունենալ, օրինակ՝ մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի կամ կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի, տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնի մասնագետների հետ համատեղ: Ցավոք, վերջին տարիներին ուսանողների թվաքանակի նվազում դիտվում է նաև հումանիտար ոլորտի ֆակուլտետներում, մասնավորապես պատմության ֆակուլտետում, ինչն ունեցավ իր բացասական դերը հաշվետու տարում «Կենսահնէագիտության» մագիստրոսական ծրագրի կայացման հարցում:

Գաղտնիք չէ, որ կրթության պատշաճ որակի ապահովման գործում կարևոր է նաև ֆակուլտետի ուսումնաստեխնիկական բազան, արդի սարքավորումների, բարձրորակ ռեակտիվների առկայությունը: Ֆակուլտետում դրանց ձեռքբերման տարբեր աղբյուրներ կան, եթե նկատի ունենանք մեզանում ուսումնական և գիտական գործընթացների անքակտելի կապը, այսինքն այն, որ ֆակուլտետի ուսումնական գործընթացները սերտորեն կապված են ամբիոնների և հետազոտական ինստիտուտի գիտական ուսումնասիրությունների հետ և գիտական դրամաշնորհների միջոցներով հայթայթված սարքերն ու ռեակտիվները օգտագործվում են նաև ուսումնական պրոցեսներում: Ֆինանսավորման աղբյուրներն են՝ ԵՊՀ-ից ֆակուլտետին հատկացվող գումարը (1.650.000 դրամ, որի մեջ մտնում են գրասենյակային ծախսերը, գործուղման, ծառայությունների ձեռքբերման և այլ ծախսերը), ԳՊԿ-ից բազային ֆինանսավորում ստացող գիտական լաբորատորիաների ֆինանսները, թեմատիկ ֆինանսավորման նախագծերի և այլ միջպետական (հայ-ռուսական, հայ-բելոռուսական նախագծերի) ֆինանսները և, վերջապես, միջազգային դրամաշնորհներից ստացվող գումարները:

Ուրախալի է, որ հաշվետու տարում ֆակուլտետի բոլոր յոթ ամբիոններն էլ արժանացել են տարաբնույթ միջազգային դրամաշնորհների, որոնց ֆինանսավորման մի մասն օգտագործվել է սարքավորումներ և ռեակտիվներ ձեռքբերելու համար: Զուտ կրթական դրամաշնորհներից հաշվետու տարում շարունակվել են աշխատանքները մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնում (ամբիոնի վարիչ՝ կ.գ.թ. Անահիտ Առաքելյան), «TEMPUS»-ի դրամաշնորհով իրականացվող ծրագրի ուղղությամբ (ձեռք

են բերվել կենսաքիմիական անալիզատոր, մանրադիտակներ, հեմոգլոբինոմետր, Elisa reader, նոութբուքեր և այլ սարքավորումներ, թվով՝ 14):

Ինչպես և նախորդ տարի, միջազգային դրամաշնորհներից ստացված գումարների առյուծի բաժինը պատկանում է «Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնին» (ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արմեն Թոշունյան) և ոչ միայն վերը նշված նորարարական կենտրոնի առումով, այլև ամբիոնում իրականացվող միջազգային հիմնադրամներով ֆինանսավորվող 10 (!) կրթական նախագծերի, գիտական թեմաների առումով (ընդհանուր գումարը՝ մոտ 92.000 ԱՄՆ դոլար): Ամբիոնը և կից գործող գիտական լաբորատորիան ստացել են նաև հանրապետական թեմատիկ ֆինանսավորմամբ 3 թեմա (ղեկավարներ՝ Թոշունյան Արմեն, Փանոսյան Հովիկ, Գրիգորյան Կարինե), որոնց ֆինանսավորման ընդհանուր գումարը մոտ 37 մլն դրամ է (մոտ 76.000 ԱՄՆ դոլար): Պարզ է, որ մոտ 130.000 ԱՄՆ դոլար ֆինանսավորման առկայությունը լուրջ խթան է նաև կրթական գործընթացների զարգացման համար: Էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնում միջազգային ֆինանսավորմամբ կատարվող 2 թեմաների ընդհանուր գումարն է՝ 30.000 ԱՄՆ դոլար, ամբիոնն ունի նաև հանրապետական թեմատիկ ֆինանսավորմամբ 1 թեմա (15 մլն դրամ կամ մոտ 30.000 ԱՄՆ դոլար): Կենդանաբանության ամբիոնում իրականացվում է միջազգային ֆինանսավորմամբ 3 թեմա (ընդհանուր գումարը՝ մոտ 16.000 ԱՄՆ դոլար), ինչպես նաև ՀՀ ԳՊԿ թեմատիկ ֆինանսավորմամբ 1 թեմա և ևս 2 հայ-ռուսական ծրագիր (մեկը՝ համատեղ գենետիկայի և բջջաբանության ամբիոնի հետ): Գենետիկայի և բջջաբանության ամբիոնն իրականացնում է 1 միջազգային ANSEF ծրագիր, 2 հանրապետական թեմատիկ ֆինանսավորմամբ և 1 հայ-ռուսական դրամաշնորհ: Կենսաֆիզիկայի ամբիոնում ևս իրականացվում է 1 ANSEF ծրագիր և 1 հանրապետական թեմատիկ ֆինանսավորմամբ ծրագիր: Բուսաբանության և սնկաբանության ամբիոնում կատարվում են 1 հանրապետական թեմատիկ ֆինանսավորմամբ ծրագիր և հայ-ռուսական հիմնարար գիտական հետազոտությունների համատեղ նախագիծ:

Այսպիսով, նշված գիտական և կրթական միջազգային դրամաշնորհների ֆինանսավորման առկայությունը ֆակուլտետում, ՀՀ Գիտության պետական կոմիտեի բազային և թեմատիկ ֆինանսավորման հետ մեկտեղ, էապես նպաստում է նյութատեխնիկական բազայի համալրմանը, կրթական գործընթացների բարելավմանը ֆակուլտետում:

Ֆակուլտետի ուսումնական տարածքների քանակն ու վիճակը, ընդհանուր առմամբ բավարար են և նպաստել են ուսումնական գործընթացների բարեհաջող անցկացմանը: Ցավոք դեռևս լուծված չէ համակարգչային պրոյեկտորների լսարաններում տեղադրման հարցը: Հաշվետու տարում ևս դիմել ենք ռեկտորատ գոնե երկու նման պրոյեկտորներ ստանալու, սակայն դեռևս հարցը լուծված չէ: Բավարարված չէ նաև որոշ ամբիոնների և գիտահետազոտական լաբորատորիաների համակարգիչներ, լապտոփեր ստանալու խնդրանքը: Հուսանք, որ եթե ոչ մինչև տարվա վերջ, ապա գոնե հաջորդ տարվա ընթացքում ռեկտորատը լուծում կտա այս հարցերին:

Ինչպես միշտ, հաշվետու տարվա ընթացքում էլ, ուսումնական գործընթացների կազմակերպումը ֆակուլտետում պրոբլեմներ չի հարուցել շնորհիվ դեկանատի բարեխիղճ աշխատակիցների՝ դեկանի տեղակալներ Կարեն Ղազարյանի, Հենրիկ Մեմերջյանի, ֆակուլտետի խորհրդի գիտքարտուղար Աննա Կարապետյանի, ինչպես նաև Ռուզան Յորդանյանի և Մարջան Գևորգյանի պատասխանատու աշխատանքի: Ուսումնական գործընթացների բարելավման գործում որոշակի դեր ունեն նաև ֆակուլտետի մեթոդխորհրդի նախագահ, պրոֆ.Կարինե Զիվանյանը, կուրատոր-դասախոսները, ինչպես նաև մեր ուսանողները, ովքեր անանուն սոցիոլոգիական հարցումների ժամանակ, որոշ դեպքերում, բարձրացնում են կարևոր հարցեր: Ուսանողների բարձրացրած հարցերին աշխատում ենք ականջալուր լինենք. Շուտով կլուծվի ֆակուլտետի ուսխորհրդին առանձին սենյակ տրամադրելու ուսանողների կողմից բարձրացրած հարցը:

Մեր ֆակուլտետի ուսումնական գործընթացներում մեծ է ուսումնական պրակտիկաների դերը: Հաշվետու տարում, ինչպես միշտ, դաշտային, փորձարարական և մանկավարժական պրակտիկաները, ընդհանուր առմամբ, ընթացել են բնականոն հունով: Ցավոք, Հանքավանի հանգրվանի պայմանների բարելավում մոտ ապագայում չենք կարող ակնկալել: Մնում է բավարարվել եղածով՝ դաշտային պրակտիկաներից առաջ Հանքավանի հանգրվանում կատարելով ամենամյա սանիտարական-վերականգնողական միջոցառումներ:

Նմանատիպ ամենամյա նորոգման կարիք ունի նաև համալսարանի տարածքում գտնվող ջերմոցը, որն օգտագործվում է ֆակուլտետի ամբիոնների կողմից ուսանողների ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի, ինչպես նաև աշխատակիցների գիտական թեմաների կատարման համար: Այստեղ վերանորոգման աշխատանքներ տարվում են դեպքից դեպք, և դեռևս բավական գործ կա անելու: Ֆակուլտետի մասնաշենքի տանիքի տարածքի մի մասում գտնվող կենդանիների բուծարանը թեև վերանորոգված է, սակայն չունի հնարավորություններ՝ հատուկ փորձասեղաններ և այլ պարագաներ, ինչը կապահովեր բուծարանի լիարժեք օգտագործումը: Հուսանք, որ տարիների ընթացքում բարձրացվող այս հարցերը կստանան դրական լուծում մոտ ապագայում, մանավանդ որ հնարավոր է նաև դեղագետ-գործընկերներն օգտվեն մեր կենդանանոցից:

3. Գիտական աշխատանքներ

Հարգելի գործընկերներ, հաշվետու տարում ֆակուլտետի գիտահետազոտական գործունեությունը գրեթե ամբողջությամբ իրականացվել է ֆակուլտետում գործող “Կենսաբանության” գիտահետազոտական ինստիտուտի շրջանակներում: Ինստիտուտը, լինելով ներֆակուլտետային կառույց և անքակտելի կապերով միահյուսված լինելով ամբիոնների հետ համատեղությամբ գործող մեծ թվով աշխատակիցների և համատեղ օգտագործվող նյութատեխնիկական բազայի առումով, միևնույն ժամանակ բավական ինքնուրույն կառույց է իր տնօրինությամբ,

Գիտական խորհրդով և իր յուրահատուկ գործառույթներով: Կարծում եմ, որ ֆակուլտետի գիտական աշխատանքների առավել մանրակրկիտ հաշվետվություն պետք է ակրնկալել հենց ինստիտուտի տնօրենի զեկույցում, ինչը մենք կունկնդրենք որոշ ժամանակ անց, մինչ այս տարվա ավարտը: Ես այսօր հպանցիկ կներկայացնեմ ֆակուլտետի գիտական գործունեության միայն որոշ, իմ կարծիքով առավել կարևոր և ընդհանրական պատկերը:

Նախ նշեմ, որ հաշվետու տարում, ինչպես վերջին տասնամյակի ընթացքում, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմի գործունեությունը բարձր գնահատանքի է արժանի: Բավական է նշել, որ հաշվետու տարում մեր աշխատակիցներն ունեցել են 272 հրատարակումներ, այդ թվում՝ 158 գիտական հոդվածներ, գիտաժողովների 93 թեզիսներ, 2 մենագրություն, 18 ուսումնամեթոդական ձեռնարկեր և 1 դասագիրք; մեր գործընկերները ստացել են 32 տարաբնույթ դրամաշնորհներ (19-ը՝ միջազգային, բոլորից շատ՝ 10 դրամաշնորհ ունեն «Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի» ամբիոնի մասնագետները) և 1 արտոնագիր; ֆակուլտետի մասնագետները եղել են 55 գիտական գործուղումներում (53-ը՝ կարճաժամկետ, 2-ը՝ երկարաժամկետ); մեր մասնագետների ղեկավարությամբ պաշտպանվել են թեկնածուական 8 ատենախոսություններ, մեր առավել ակտիվ գործընկերներն արժանացել են 15 տարաբնույթ մրցանակների: Այժմ, վերը նշվածը փոքր-ինչ մանրամասնեմ: Հրատարակված 158 գիտական հոդվածներից 100-ը լույս են տեսել Հայաստանից դուրս. իհարկե միջազգային գիտական ռեյտինգ ունեցող ամսագրերում հրատարակվածները կազմում են միայն 54 %-ը, ինչը նույնպես վատ ցուցանիշ չէ: Ուրախալի է, որ բոլոր ամբիոններն էլ ներկայացված են այդ 54 հոդվածներում, բայց, բնականաբար, տարբեր քանակներով: Առավել շատ են «Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի» ամբիոնի հոդվածները (մոտ կեսը): Կան նաև բարձր ռեյտինգ ունեցող ամսագրերում հոդվածներ (օրինակ՝ «Էկոլոգիայի և բնության պահպանության» ամբիոնի վարիչ Նելլի Հովհաննիսյանը հեղինակներից մեկն է 40-ից ավելի IF ունեցող “Nature” ամսագրում հրատարակված մեծաթիվ համահեղինակներով հոդվածի): Գիտաժողովների ճնշող մեծամասնությունը միջազգային են:

Հաշվետու տարում գիտակրթական գործընթացներում ֆակուլտետի շոշոփելի հաջողություններ արձանագրած որոշ մասնագետներ արժանացել են մեծ թվով բարձր պարգևների: Նրանց թվում են Հանրապետության Նախագահի մրցանակ ստացած պրոֆեսոր Պողոս Վարդևանյանը, ՀՀ ԳՊԿ-ի Ոսկե մեդալով պարգևատրված ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ Արմեն Թռչունյանը և Ռուբեն Հարությունյանը, ովքեր նաև ԳՊԿ-ի մրցույթի հաղթողների թվում են որպես «Բարձր արդյունավետությամբ գիտաշխատողներ»: Ռուբեն Հարությունյանը Ռուսաստանի Նովոսիբիրսկ քաղաքում կազմակերպված «Կենսաբժշկության» ֆորումում ստացել է նաև «Արժաթե սիգնա» մրցանակ, իսկ Արմեն Թռչունյանն արժանացել է Ջրածնային էներգետիկայի միջազգային ասոցիացիայի Ակիրա Միցուի միջազգային մրցանակի:

Շատ ուրախալի է, որ մեր անվանի փորձառու գիտնականների հետ մեկտեղ մրցանակների են արժանանում մեր միջին տարիքի և, հատկապես, երիտասարդ մասնագետները: Այսպես, «Բարձր արդյունավետությամբ երիտասարդ գիտաշխատող» մրցույթի հաղթողների թվում են «Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի» ամբիոնի մասնագետներ Կարեն Թռչունյանը, Լիլիթ Հակոբյանը և Հարություն Սարգսյանը, իսկ վերջինս (Հարություն Սարգսյանը) նաև «Հայկյան-2015» մրցանակակիրն է Լավագույն երիտասարդական գիտական նվաճում անվանակարգում: Ամերիկայի մանրէաբանական ընկերության Մորիսոն Ռոզոգայի միջազգային մրցանակ է ստացել դոցենտ Աննա Փոլադյանը, միջազգային տարբեր գիտաժողովներում «Լավագույն բանավոր զեկուցման» մրցանակների են արժանացել Նաիրա Սահակյանը, Պարզև Հովհաննիսյանը. Լիլիթ Հակոբյանը արժանացել է «Երիտասարդ տաղանդ» տիտղոսի ջրածնի ուսումնասիրման ոլորտում ակնառու հետազոտության համար և այլն: Տեսնում ենք, որ պարզևների առյուծի բաժինը պատկանում է միավորված ամբիոնի աշխատակիցներին:

Ֆակուլտետի մասնագետների գիտական մակարդակի վերելքին նպաստում է նաև համագործակցությունը ինչպես արտերկրների, այնպես էլ, ինչու չէ, Հայաստանի համապատասխան գիտական կենտրոնների հետ: Նման համագործակցության օրինակները շատ են: Այս առումով նշեմ Գենետիկայի և բջջաբանության ամբիոնի և «ՔԵՆԴԼ» նախագծի առաջին փուլի՝ «ԱՐԵԱԼ» գծային արագացուցչի մասնագետների միջև արդեն երկրորդ տարին գործող համագործակցությունը: Հուսով եմ, որ ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Ռուբեն Հարությունյանի և իր աշխատակիցների այս գիտական համագործակցությունը հաջողությամբ կշարունակվի: Օգտվելով առիթից, կուզեմ նաև շնորհավորել Ռուբեն Հարությունյանին ՀՀ ԳԱԱ Բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ:

Սրանով թույլ տվեք սահմանափակել գիտական աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը, առավել մանրամասն տեղեկատվություն ակնկալելով «Կենսաբանության» ինստիտուտի հաշվետվության ժամանակ: Ի մի բերելով միայն նշեմ, որ հաշվետու տարում ևս ֆակուլտետի գիտական արդյունավետությունը բավական բարձր է եղել:

4. Ֆակուլտետի գործունեության այլ բնագավառներ

Հաշվետու տարում պարբերաբար անցկացվել են ֆակուլտետի Գիտխորհրդի նիստերը, լսվել են պլանով նախատեսված հարցեր: Գիտխորհրդի բնականոն գործունեությանը մեծապես նպաստել է գիտքարտուղարի՝ դոցենտ Աննա Կարապետյանի բարեխիղճ աշխատանքը: Հաշվետու տարում, ինչպես և վերջին տարիներին, դրական գործունեություն է ծավալել ֆակուլտետի Արհքյուրոն (նախագահ՝ դոցենտ Մեդրա Խաչատրյան): Ֆակուլտետի առավել կարիքավոր աշխատակիցները նպաստներ են ստացել, տարբեր բարեգործական ֆոնդերից առավել բարձր առաջադիմություն ունեցող կարիքավոր ուսանողների մի մասին

տրվել է միանվագ օգնություն: Աշխատակիցները հնարավորություն են ունեցել իրենց հանգիստն անցկացնելու համալսարանի ծաղկածորյան հանգրվանում՝ ձեռք բերելով զեղչ գներով ուղեգրեր:

Ֆակուլտետի դեկանատն անմիջական կապի մեջ է եղել ֆակուլտետի Ուսանողական խորհրդի հետ, շատ դեպքերում օժանդակել խորհրդի նախաձեռնություններին՝ ուսանողական ցերեկոյթներ, հավաքներ կազմակերպելու և այլ գործերում: Հաշվետու տարում, ընդհանուր առմամբ, թե Ուսխորհրդի, և թե ուսանողական գիտական ընկերության աշխատանքը դրական պիտի համարել:

Ֆակուլտետի լրիվ դրույքով աշխատող դասախոսները հաշվետու տարում ևս ստացել են աշխատավարձի հավելավճարներ երեք խմբով՝ 50.000, 30.000 և 10.000 դրամ հավելավճարի ծավալով: Գիտեք, որ 2017 թվականի սեպտեմբերից էապես փոխվում են հավելավճարի հատկացման սկզբունքները: Լիովին համամիտ ենք նոր համակարգի պայմաններին, հուսով ենք, որ դրանք ավելի օբյեկտիվ են, էլ ավելի կնպաստեն ֆակուլտետի գիտակրթական գործընթացների զարգացմանը, կյաթանեն մասնագետների միջև արդարացի մրցակցությունը:

Հաշվետու տարում շարունակվել է 2011 թվականի սեպտեմբերից սկսված ԵՊՀ դասախոսների որակավորման բարձրացման հնգամյա ծրագիրը: Մեր ֆակուլտետն ակտիվորեն ներգրավված է այդ գործընթացներում, սակայն կան դասախոսներ, ովքեր թերանում են և դեռևս չեն հավաքել կրեդիտների անհրաժեշտ քանակի մի մասը: Պետք է հիշել, որ ռեկտորի հրամանի համաձայն, որակավորման բարձրացման համար բավարար քանակի կրեդիտների բացակայությունը լուրջ խոչընդոտ է լինելու տվյալ դասախոսի համար աշխատանքն իր պաշտոնում շարունակելու առումով:

5. Ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագրի կատարում

Հարգելի գործընկերներ, գիտեք, որ հաշվետու տարում սկսեց գործել ԵՊՀ զարգացման 2016-2020թթ ռազմավարական ծրագիրը, որի շրջանակներում, բնականաբար, ուրվագծվեցին նաև մեր ֆակուլտետի զարգացման հիմնական ուղիներն ու գործունեության գերակայությունները: Անցել է առաջին տարին և կարող ենք հաշվետու լինել 2016 թվականի որոշ աշխատանքների կատարման առումով: Հակիրճ ներկայացնեմ ռազմավարական ծրագրի շրջանակներում կատարված որոշ աշխատանքներ:

Նախ նշեմ, որ այդպիսի շատ աշխատանքների մասին արդեն իսկ խոսվեց այս հաշվետվության մեջ: Օրինակ՝ մագիստրոսական կրթական ծրագրերի վերամշակման աշխատանքների մասին: Հաշվետու տարում քննարկվել են ֆակուլտետում գործող մագիստրոսական ծրագրերը, դուրս բերվել դրանց ուժեղ և թույլ կողմերը, որոնց հիման վրա վերանայվել են ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը: Մշակվել են վերը նշված 6 նոր մագիստրոսական ծրագրերը, իսկ միջմասնագիտական մագիստրոսական ծրագիր՝ «Կենսահնէագիտությունը» մշակման ընթացքում է:

Այս ծրագրերում մշակվել են նոր մասնագիտական դասընթացներ՝ հաշվի առնելով «Կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոնի» և «Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնի» նորագույն սարքավորումների օգտագործմամբ կատարվելիք լաբորատոր աշխատանքների հնարավորությունները: Վերանայվել են նաև գործող մագիստրոսական ծրագրերի նպատակի և կրթական վերջնարդյունքների ու մոդուլների միջև համապատասխանությունը, համապատասխանեցվել են կրթական վերջնարդյունքների ձևերը բերման գնահատման մեթոդները, կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդները:

Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գրագործությունը կանխելու նպատակով թե՛ բանակալավրի, և թե՛ մագիստրոսի կրթական ծրագրերի մակարդակներում, մշակման ընթացքում են ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ձևակերպման ընդհանուր պահանջների ձևաթղթերը: Բոլոր ամբիոններին հանձնարարվում է յուրաքանչյուր տարի ունենալ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի էլեկտրոնային տարբերակները: Նախատեսվում է ստեղծել ընդհանուր բազա այդ աշխատանքների համար, որոնք կպահպանվեն դեկանատում:

Հաշվետու տարում համալրվել են «Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ» և «Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ» առարկաների վեր-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգերը, իսկ «Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ» առարկայի վեր-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգն արդեն շահագործվում է ուսումնառության ռեսուրսների առցանց մատուցման և հեռավար ուսուցման համար:

Ինչ վերաբերում է ռազմավարության մեջ նշված գիտահետազոտական ծրագրերում ասպիրանտների և մագիստրանտների մասնակցության ընդլայնման ուղղությամբ նախատեսվող աշխատանքներին, ապա պետք է նշել, որ մեզանում այս հարցը վաղուց գրեթե 100%-ով լուծված է, քանի որ բոլոր ասպիրանտների և մագիստրանտների ատենախոսությունների և թեզերի գիտական թեմաները գտնվում են «Կենսաբանություն» գիտահետազոտական ինստիտուտում և ֆակուլտետի ամբիոններում իրականացվող գիտահետազոտական ծրագրերի շրջանակներում: Միաժամանակ պետք է նշել, որ նպատակ ունենալով բարձրացնել մագիստրոսական թեզերի և ատենախոսական աշխատանքների գիտական մակարդակը, օգտագործել ակադեմիական ինստիտուտների գիտատեխնիկական հնարավորությունները, մեթոդական բազան համագործակցում ենք ՀՀ ԳԱԱ կենսաբանության տարբեր բնագավառների գիտահետազոտական ինստիտուտների և կենտրոնների առաջատար որոշ գիտնականների հետ, ովքեր ներգրավված են ֆակուլտետի մագիստրանտների և ասպիրանտների հետազոտական աշխատանքների համատեղ ղեկավարման գործում:

Հաշվետու տարում, ինչպես և նախատեսված էր զարգացման ծրագրում, դրամաշնորհային տարբեր ծրագրերի հաշվին ֆակուլտետում կազմակերպվել են սեմինարներ, թրեյնինգներ, դպրոցներ: Այսպես, կենդանաբանության ամբիոնում

կազմակերպվել են «Կենդանիները մեր կյանքում», և «Չղջիկների միջազգային գիշեր» միջոցառումները, ՀՀ բնապահպանության նախարարության, Երևանի պետական համալսարանի, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ), և «Երիտասարդ կենսաբանների ասոցիացիայի» կողմից կազմակերպվել է «Էկոհամակարգային ծառայություններ» միջոցառումը. Իսկ «Կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոնում» ԱՄՆ Մասսաչուսեթսի համալսարանի բժշկական դպրոցի հետ համատեղ բակալավրիատի ուսանողների համար՝ «Գիտական հետազոտությունների արդի մեթոդներ. տեր-մակաբույծ փոխազդեցությունների ուսումնասիրություն» միջոցառումը:

Համաձայն ռազմավարական ծրագրի ս.թ. նոյեմբերից ամիսը մեկ անգամ ֆակուլտետում կազմակերպվելու են «Բաց դռների օրեր» ավագ դպրոցների, վարժարանների և քոլեջների սովորողների համար, որոնց ընթացքում սովորողները հնարավորություն կունենան ծանոթանալու ֆակուլտետի գիտակրթական ներուժի և ուսումնական գործընթացի առանձնահատկություններին:

Հաշվետու տարում ֆակուլտետի ամբիոններում, «Կենսաբանություն» գիտահետազոտական ինստիտուտում, «Կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոնում» և «Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնում» կազմակերպվել են ճանաչողական այցեր ավագ դպրոցների, վարժարանների և քոլեջների սովորողների համար: Վերջիններս ծանոթացել են ֆակուլտետի ստորաբաժանումներում իրականացվող ժամանակակից ուսումնասիրություններին: Ինչպես նշվեց այս հաշվետվության մեջ, մայրաքաղաքի ավագ դպրոցներում դասընթացների, իսկ մարզային դպրոցներում՝ առանձին դասախոսությունների իրականացման գործընթացներին աջակցելու նպատակով ֆակուլտետի լավագույն մասնագետները հաշվետու տարում պարբերաբար գործուղվել են համապատասխան ուսումնական հաստատություններ:

Հայտնի է, որ 2016-2020թթ. ԵՊՀ ռազմավարությանը լիովին համահունչ է նաև start-up ծրագրերի առկայությունը: Այս առումով նույնպես ֆակուլտետում որոշ աշխատանք կատարվել է: “ԵՊՀ-Կենսավառելիք” start-up-ի թիմը (Կարեն Թոշոնյանի գլխավորությամբ, կազմված 8 անդամներից) 2015 թվականին մասնակցեց ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության և գլոբալ էկոլոգիական հիմնադրամի կողմից հայտարարված Հայաստանում մաքուր տեխնոլոգիաների գլոբալ ինովացիոն ծրագրի ակսելերացիոն ծրագրին, որը տևեց շուրջ 3 ամիս: Ակսելերացիոն ծրագրի շրջանակներում սիլիկոնյան հովտից ժամանած մասնագետների հետ մշակվեց տարբեր գյուղատնտեսական և արդյունաբերական թափոններից կենսաջրածնի արտադրության բիզնես մոդել և տեխնոլոգիական առաջարկ ու այն ներկայացվեց մրցույթին: Թիմը ճանաչվեց հաղթողների շարքում, և դրամաշնորհային ծրագիրն ավարտվեց 2016 թվականի օգոստոսին: Կենսաջրածնի տեխնոլոգիական մշակումները և նոր առաջարկները կատարելագործման փուլում են և շուտով պետք է իրականացվի բետա թեստավորում (փոքր արդյունաբերական ծավալներով)՝ հետագայում արդյունաբերական մեծ ծավալներով թեստավորման նպատակով:

Հարգելի գործընկերներ, ժամանակը չի ներում ռազմավարական ծրագրի բոլոր կետերին անդրադառնալ. նշեմ միայն, որ դրանց մի մասում որոշ թերացումներ կան, որոնք, կարծում եմ, կհաղթահարենք մոտ ապագայում:


Թերևս այսքանը. բնական է, որ ֆակուլտետում կատարված աշխատանքները ամբիոնների վարիչների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, գիտական լաբորատորիաների ղեկավարների, գիտաշխատողների, դեկանատի և ընդհանրապես, ֆակուլտետի բոլոր աշխատակիցների և մեր օրինակելի ուսանողության համատեղ, նպատակամղված գործունեության արդյունք են: Հայտնում եմ նրանց բոլորին իմ խորին շնորհակալությունը, հավաստիացնում, որ կենսաբանության ֆակուլտետը այսուհետև ևս կպահպանի իր բարձր վարկանիշը:


Շնորհակալություն ուշադրության համար:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Ռ.Մ.Հարությունյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Ա.Հ.Թոչունյանը, կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ՝ կ.գ.դ., պրոֆ. Պ.Հ.Վարդևանյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ պրոֆ. Է.Ս. Գևորգյանը բավականին մանրամասն ներկայացրեց կենսաբանության ֆակուլտետում վերջին տարվա ընթացքում կատարված բոլոր աշխատանքները և շնորհակալություն հայտնեցին դեկանին և դեկանատին՝ լավ աշխատանքի համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հավանություն տալ վերջին տարվա ընթացքում կենսաբանության ֆակուլտետում կատարված աշխատանքներին և դեկանի աշխատանքը գնահատել բավարար:

Գիտական խորհրդի նախագահ՝
ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, պրոֆ.  Է.Ս.Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ դոցենտ  Ա.Ֆ.Կարապետյան